

ԹԱԳԱԻՈՐԻՆ ԽԵԼԱՅԻ ՈՐԴԻՆ



Ժամանակին թագաւոր մը կար, որ երկու որդի ունէր: Թագաւորը անոնց ուսումնատութիւնը* կը յանձնէ փորձառու ուսուցիչներու, որպէսզի պատրաստուին եւ ապագային անոնցմէ յարմարագոյնը ստանձնէ թագաւորութիւնը:

Մի քանի տարի յետոյ թագաւորը կը հիւանդանայ եւ կ'որոշէ ընտրել իր յաջորդը: Կ'ուզէ քննութենէ անցընել իր զաւակներուն կարողութիւնը, ուստի կը կանչէ զանոնք եւ իւրաքանչիւրին սենեակ մը կու տայ եւ կ'ըսէ. «Այս սենեակը ամբողջութեամբ պէտք է լեցնէք որեւէ բանով, պայմանաւ որ պարապ տեղ չմնայ»:

Յաջորդ օրը թագաւորը կ'այցելէ երեց որդիին: Կը տեսնէ, որ սենեակը ամբողջութեամբ խոտով լեցուած է: Թագաւորը կ'ափսոսայ* երեց որդիին անխելքութեան:



Ապա կ'երթայ կրտսեր որդիին սենեակը, որ գոց էր: Թագաւորը դուռը կը զարնէ, տղան հօրմէ կը խնդրէ, որ ներս մտնէ եւ դուռը գոցէ: Սենեակը կատարեալ խաւարի մէջ էր: Տղան մոմ մը կը վառէ ու կ'ըսէ. «Ես լոյսով լեցուցի այս սենեակը»: Թագաւորը շատ կ' ուրախանայ եւ հպարտ կը զգայ իր հնարամիտ կրտսեր որդիով եւ կը գիտնայ, որ ան է յարմարագոյն անձը, որ պիտի կարենար կառավարել իր թագաւորութիւնը:

Այս պատմութիւնը ցոյց կու տայ, որ խելացութիւնն ու հնարամտութիւնը անհրաժեշտ են բարձր դիրքերու հասնելու համար:

ԽԵԼԱՑԻ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ



Ժամանակին թագաւոր մը կար, որ շատ կը սիրէր հանելուկներ հարցնել իր պալատականներուն: Ան յաճախ շատ տարօրինակ հարցումներ կը հարցնէր, որոնց պատասխանելը շատ դժուար կ'ըլլար:

Օր մը, թագաւորը այնպիսի տարօրինակ հարցում մը կը հարցնէ, որ պալատականներէն ոչ ոք կրնայ պատասխանել: Թագաւորը մէկ առ մէկ բոլորին կը նայի, իսկ անոնք կը ծռեն իրենց գլուխները չկարենալով գտնել հանելուկին պատասխանը: Այդ միջոցին, ներս կը մտնէ իր սրամտութեամբ նշանաւոր պալատական մը:



Ան գիտնալով թագաւորին սովորութիւնը, կ'ըսէ.

«Կրնա՞մ գիտնալ հանելուկը, որ փորձեմ պատասխանել»:

Թագաւորը կ'ըսէ. «Քանի՞ ագռաւ կայ մեր քաղաքին մէջ»:

Խելացի պալատականը անմիջապէս կը պատասխանէ. «Յիսուն

հազար չորս հարիւր ութսունվեց ագռաւ կայ, ո՛վ տէր»:

Թագաւորը կը հարցնէ. «Ինչպէ՞ս կրնաս այսքան վստահ ըլլալ»:

Պալատականը կը պատասխանէ. «Կրնաս մարդոցդ դրկել եւ հաշուել

տալ, եթէ աւելի ագռաւներ գտնեն, կը նշանակէ որ կարգ մը ագռաւներ

այցելութեան եկած են իրենց ազգականներուն քով, իսկ եթէ նուազ

ագռաւներ գտնեն, կը նշանակէ որ ագռաւներէն մաս մը այցելութեան

գացեր են իրենց ազգականներուն քով»:

Թագաւորը շատ գոհ կը մնայ սրամիտ պալատականին

պատասխանէն եւ կը պարգեւատրէ* զայն:

Միբելինէ՛ր, այս պատմութիւնը ցոյց կու տայ, թէ սրամտութեամբ

կարելի է նոյնիսկ ամէնէն դժուար հարցերուն պատասխան գտնել:

ԹԱԳԱԻՈՐԻՆ ՀՆԱՐՔԸ



Ժամանակին, թագաւոր մը, փորձելու համար իր հպատակները, հսկայ քար մը զետեղել* կու տայ ճամբուն մէջտեղը: Ան, ծպտուած ու պահուրտած, կը հետեւի անցորդներուն, պարզապէս գիտնալու համար, թէ ո՛վ պիտի մտածէ ժայռը ճամբուն մէջտեղէն վերցնելու մասին:

Թագաւորին բարեկամները, վաճառականներ եւ այլ հպատակներ, բոլորն ալ կ'անցնին ժայռին քովէն, բայց ո՛չ մէկը կը փորձէ ժայռը տեղէն շարժել: Շատեր նոյնիսկ կը մեղադրեն* թագաւորը, որ չի հրահանգեր ժայռը տեղէն վերցնել:

Օր մըն ալ, բանջարեղէններով բեռնաւորուած գիւղացի մը կ'անցնի նոյն ճամբէն: Տեսնելով ժայռը ճամբուն մէջտեղը, ան իր բեռը մէկ կողմ կը դնէ եւ կը փորձէ շարժել ժայռը:



Բաւական ջանքէ ետք, վերջապէս կը յաջողի ժայռը ճամբուն եզերքը հրել: Յանկարծ ժայռին տակը տեղադրուած արկղ մը կը նկատէ, որու մէջ բազմաթիւ ոսկիներ կային: Կար նաեւ գրութիւն մը թագաւորին կողմէ, որ կըսէր թէ ոսկիները կը պատկանին ա՛յն անձին, որկը մտածէր ու կը յաջողէր ժայռը ճամբէն հեռացնել:

Այսպիսով, գիւղացին կը հարստանայ եւ կը սորվի, թէ ո՛վ որ կը յաջողի արգելքներ վերացնել, առիթ կունենայ բարելաւելու իր վիճակը:

ԾԱՐԱԻ ԱԳՌԱԻԸ



Ամառուան շատ տաք օդ մըն էր: Ծարաւ ագռաւ մը կը թռչէր դաշտերուն մէջ ջուր փնտռելով: Երկար ժամանակ չի կրնար ջուր գտնել, հետեւաբար կը սկսի յոյսը կորսնցնել:

Ագռաւը ինքզինք շատ տկար կը զգար ու շուարած էր, թէ ինչպէ՞ս պիտի կարենար ծարաւը յագեցնել, երբ կը տեսնէ ջուրի սափոր* մը, մէջը որոշ քանակութեամբ* ջուր: Ագռաւը կ'ուրախանայ եւ կը փորձէ գլուխը մտցնել սափորին մէջ, սակայն տխրութեամբ կը նշմարէ* թէ սափորին վիզը շատնէղ էր: Կը փորձէ շրջել* սափորը, որպէսզի մէջի ջուրը դուրս հոսի, սակայն չի կրնար, որովհետեւ սափորը շատ ծանր էր:



Ագռաւը բաւական կը մտածէ, ապա ջուրջը նայելով կը տեսնէ խճաքարեր*։ Այդ վայրկեանին իսելացի գաղափար մը կունենայ։ Խճաքարերը մէկ առ մէկ սափորին մէջ կը լեցնէ։ Որքան խճաքարերը կը լեցուէին սափորին մէջ, ջուրը այդքան կը բարձրանար, մինչեւ որ ագռաւը կը կարենայ խմել ջուրը։

Ուրեմն սիրելիներ, այս պատմութիւնը ցոյց կու տայ թէ անկարելի նկատուած հարցի մը լուծումը կարելի է գտնել հնարամտութեամբ*, առանց յուսահատելու եւ զանգատելու։